

ԱԶԳԱԿ ՅԱՒԵԼՈՒԱԾԸ



ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ՅԱՒԵԼՈՒԱԾԸ

«Ազգակ» իր յաւելուածներու շարքին նկատի առաւ յատուկ թիւ յատկացնել Համապայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկին: Քովի սինակներն ու ներփակ էջերը առարկայական ձեւով կը ներկայացնեն Հայագիտական Հիմնարկին կտրած շուրջ քսանհինգամեայ ուղին, դիմագրաւած դժուարութիւնները, արձանագրած յաջողութիւնները, Երեւանի Պետական Համալսարանին հետ կնքած պայմանագիրին կէտերն ու այդ ծիրին մէջ շրջանաւարտներուն ձեռք ձգած մասնագիտութիւնները:

Տարիներու ընթացքին Հայագիտական Հիմնարկը իր յարկէն ներս ընդունած է ոչ միայն Լիբանանէն, այլ նաեւ Միջին Արեւելքէն ու հեռուոր Ամերիկաներէն ուսանողներ, որոնք սփռուածն այս պայմաններուն մէջ ու հակառակ ուսումնական-համալսարանական այլընտրանքային մասնագիտութիւններու կարելիութիւններուն, նախընտրած են հետեւիլ հայ գրականութեան, քանասիրութեան կամ հայ ժողովուրդի պատմութեան դասանիթերուն, ընդհանրապէս հայագիտութիւնը ընտրելով իրենց ուսման մասնագիտութիւնը: Թիւերը կը վկայեն, որ սփռուածն մեր պայմաններին կառոյցներն ու հաստատութիւնները ո՛րքանով ներառած են Հայագիտականի շրջանաւարտները: Փաստը կը մնայ փաստ, որ Հայագիտական Հիմնարկը տարիներ շարունակ մարդո՞ժ հայթայթած է մեր դպրոցներուն, մամուլին, կուսակցական գրասենեակներուն եւ հայ հանրային կեանքին ընդհանրապէս:

Միաժամանակ բացայայտ իրողութիւն է, որ տնտեսական համաշխարհային ներկայ համակարգը արագընթաց ձեւով շեղած է երիտասարդութեան եւ ուսանողութեան հետաքրքրութիւնները ընդհանրապէս մարդկային գիտութիւններու բնագաւառէն եւ բոլորին ուշադրութիւնները կեդրոնացուցած՝ առեւտրական-համակարգչային կամ տնտեսական գիտութիւններու մարպերուն վրայ: Ապաքաղաքականացումը, ապագադափարականացումը, ապապայանացումը միջպայան այսօրւան «գաղափարախօսութեան» դաւանած արժէքներն են եւ հակառակին ուսման մարպերու սնանկացումը այսօր միջպայան երեւոյթ է:

Միջպայան այս հոսանքին դէմ թիավարելու կոչուած է նաեւ Հայագիտական Հիմնարկը, իր սահմաններուն մէջ, եթէ անշուշտ կ'ընդունինք, որ ան պիտի շարունակէ նկատուիլ մեր հանրային-հասարակական կեանքին մարդո՞ժ հայթայթելու ամէնէն կարելոր միջավայրերէն մէկը: Հաւանաբար, անհրաժեշտ են վերաորակաւորումը, դասանիթերու վերամշակումը, կառոյցն ու հաստատութիւնը առաւել եւս գրաւիչ դարձնելու միջոցառումներու որդեգրումը: Յամենայնդէպս, աւելի քան անհրաժեշտ է Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի անխափան գործունէութիւնը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԵՒՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒԲԵԱՆ «ԱԶԳԱԿ»ԻՆ Կ'ԸՍԷ:

«ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄԸ ՏԱԼՈՒ ԿԵԴՐՈՆՆ Է ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ»

«ԱԶԳԱԿ».- Լիբանանեան եւ ազգային ինչ պայմաններու տակ, ինչպիսի մթնոլորտի մէջ հիմնուեցաւ Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը:

ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒԲԵԱՆ.- Մինչեւ 1970ական թուականները լիբանանահայ գաղութը իրողապէս ընդունուած էր իբրեւ Սփիւռքի կեդրոնական գաղութը եւ պատրաստ էր՝ կազմակերպելու հայագիտական Հիմնարկի մը դասաւանդութիւնները: Նաեւ կար հայագիտական բարձրագոյն ուսման կեդրոն ունենալու երկար տարիներու տենչը, որ չէր իրականացած, եւ՝ զայն անպայման յաջողցնելու ձգտումը: Պէտք է ըսել, որ այդ տարիներուն մեր գաղութը իսկապէս կ'ուզէր մեծ իրագործումներ կատարել: Տեղի ունեցած էր նաեւ սերնդափոխութիւն:



Իսկ ինչ կը վերաբերի այս ծրագիրը յաջողցնելու համար անհրաժեշտ ուժերու կուտակման, պէտք է նշել, որ համալսարանական եւ տարբեր բնագաւառներու մասնագէտ բաւական մեծ թիւով ուժեր կը գործէին թէ՛ Լիբանանի տեղական համալսարաններուն եւ թէ՛ ընդհանրապէս մշակոյթի ու արուեստի տարբեր բնագաւառներուն մէջ:

Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի ստեղծման նպաստող պայմանները կարելի է բացատրել նաեւ ուրիշ մէկ ուղղութեամբ: Սերունդի փոփոխութեան մասին կը խօսինք. գրեթէ սպառած էր այն մարդու՞ժը՝ մեր մտաւորական հին սերունդը, որ Հայաստանի անկախութեան անկումէն ետք իր շունչով, խօսքով ու գործով տասնամեակներ շարունակ օրինակելի էր նոր սերունդներուն համար: Առաջնակարգ մտաւորականութեան հետ նոյնպէս սպառած էր միջին մտաւորականութիւնը, որ իրեն հետ բերած էր հայրենի բնօրրանին բոյրը: Հայեցի կրթութիւնը միայն գիտութիւնը չէ, նաեւ արուեստն է, մթնոլորտը: Այդ մթնոլորտը ապահովելու համար անհրաժեշտ է նոր ուժեր պատրաստել:

Լիբանանը կը ներկայացնէ Սփիւռքի այն սակաւաթիւ միջավայրերէն մէկը, ուր այսպիսի բազմաթիւ պայմաններ կը նպաստեն հայաշունչ մթնոլորտի ստեղծման: Ասոնց վրայ կարելի է աւելցնել երկրին համայնքային դրութիւնը, որ ազատութիւն կու տայ մեզի մշակութային եւ կրթական մարզին մէջ առանձին ծրագիր ղենենալու եւ զայն գործադրելու: Այս շրջագիրին մէջ կ'ամբողջանան այն պայմանները, որոնցմով կարելի եղաւ ամէնէն աւելի Լիբանանի մէջ իրականացնել Հայագիտական Հիմնարկի ստեղծումը:

«ԱԶԳԱԿ».- Հայագիտական նիւթերու որակաւոր ուսուցիչներ պատրաստելու կողքին, Հայագիտական Հիմնարկը նպատակադրած է ակադեմիական մակարդակով հայագետներու պատրաստութիւնը:

Ե. Փ.- Հայագիտական Հիմնարկը ուսուցիչներ պատրաստելու կողքին, հասցուցած է մեր մամուլին մէջ գործող խմբագիրներ եւ ազգային-հասարակական կառոյցներու գործիչներ: Ծիշդ է, այս աշխատանքը մասնագիտական ձեւով չի կատարուիր, բայց կը կատարուի ծանօթացումը լեզուին, մեր մշակոյթին, գրականութեան, պատմութեան քիչ մը աւելի գիտականացած ձեւով: Հայագիտութեան կազմաւորումը տալու կեդրոնն է այս Հիմնարկը, որուն շնորհիւ մեր շրջանաւարտները բազմանպատակ գործունէութիւն կրնան ծաւալել: Ասոր կողքին

«ՊԷՏՔ Է ՄՏԱԾԵԼ, ՈՐ Ի՞ՆՉ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԷՏՔ Է ԿԱՏԱՐԵԼ ՅԱՌԱԶԳԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ»

«ԱԶԴԱԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ

«ԱԶԴԱԿ».- Ի՞նչպես կը բնորոշեք Հայագիտականի առաքելութիւնը:

ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ.- Հայագիտականի առաքելութիւնը խորքին մէջ Համազգայինի առաքելութիւնն է: Մինչեւ որոշ թուական Հայագիտական գոյութիւն չունէր, սակայն Համազգայինը Հայագիտականի ուղղութեամբ կ'աշխատէր: Ծեմարանը, որ հիմնուած է շուրջ 72 տարի առաջ, ստեղծուած է խորքին մէջ Հայագէտներ պատրաստելու համար. այս չինչանակեր, թէ հոնկէ աւարտողները բոլորն ալ Հայագէտներ պիտի ըլլային, այլ հայերէն պիտի սորվէին, հայերէն պիտի տարածէին եւ նուիրուէին ուսուցչութեան: Եւ այդպէս ալ եղաւ, մինչեւ Հայագիտական Հիմնարկի հիմնադրութիւնը, մեր ուսուցիչները, խմբագիրները ծեմարանէն եղած էին, անշուշտ հայկական համալսարանական ուսում չէին աւններ, այլ ուսման կը հետեւէին եւ ուսուցիչ կը դառնային: Աւելի ուշ էր, որ անհրաժեշտութիւնը նկատուեցաւ աւելի մասնագիտացում մէջտեղ բերել եւ այսպիսով հիմնուեցաւ Հայագիտական Հիմնարկը: Հայագիտականին նպատակն էր ուսուցիչ, խմբագիր եւ ազգային գործիչ պատրաստելը, մանաւանդ որ Սփիւռքը Հայաստանէն բաժնուած է ոչ միայն առարկայականօրէն, այլ նաեւ՝ երկու լեզուներով եւ ուղղադրութեամբ, սակայն մենք տակաւին մինչեւ օրս կը յուսանք, որ այդ բոլոր բարդութիւնները հարթուին:

«Ա».- Կը կարծե՞ք, որ 70ական տարիներուն եւ անկէ առաջ հայկական վարժարաններէ շրջանաւարտ աշակերտներուն հայերէնը եւ անոնց կարողութիւններն ու գիտելիքները բաւարար չէին գոհացնելու օրուան պահանջը հայերէն լեզուի ուսուցիչի եւ ընդհանրապէս յանձնառու մտաւորականութեան:

Մ. Մ.- Սփիւռքեան պայմաններուն մէջ պէտք է համոզուինք, թէ մշակութային արժէքները եւ հայկական արժէքները առհասարակ ենթակայ են առօրեայ մաշումի: Երբ հայրենիքին մէջ չես եւ իբրեւ փոքրամասնութիւն կ'ապրիս այլ օտար մեծ ընկերութեան մէջ, այդ վտանգը անխուսափելի իրողութիւն կը նկատուի: Կրնամ առանց վախի ըսել, թէ այսօրուան Հայագիտականի շրջանաւարտը այնքան հայերէն չի գիտեր, որքան 20 - 30 տարի առաջ հայկական վարժարանի աշակերտը: Ասիկա պէտք է իրապաշտ ըլլալով տեսնել եւ համոզուիլ, որ այդպէս է, առանց ըսելու, թէ ատենին հայկական վարժարանները աւելի լաւ էին, քան հիմա. ընդհակառակը, այսօր կրնանք ըսել, թէ անոնք բարելաւուած են, սակայն մշակութային մաշումով կը մաշի նաեւ հայկական դպրոցը: Այսօր կեանքը մեծապէս փոխուած է եւ ասիկա անպայման պիտի ազդէ դպրոցներուն վրայ: Սակայն հայրենիքի հետ յարաբերութիւնները յոյս կը ներշնչեն, որովհետեւ այդ հաղորդակցութիւնը արժէքներու վերականգնումի առիթ կ'ընծայէ մէկ կողմէ. այս բանը կարեւոր է նաեւ Հայաստանի համար, որովհետեւ Սփիւռքի միջոցով մշակ-

կութային ներդրում կարելի է ընել դէպի հայրենիք: Այնպէս որ, այս ծիրին մէջ երկու կողմերը փոխադարձաբար յանձնառու են իրարու նկատմամբ՝ բարձրանալու եւ զիրար բարձրացնելու իմաստով:

«Ա».- Ի՞նչպէս կը դիտեք Հայագիտականի կապը եւ գործակցութիւնը Հայաստանի մշակութիւնի ցարարարութեան եւ Հայաստանի Պետական Համալսարանին հետ:

Մ. Մ.- Դրական է, պայմանաւ որ այդ մակարդակին վրայ մնայ: Մենք պէտք է այդ խաբկանքը ունենանք, որ եթէ այդ անունը տրուեցաւ եւ գործակցութիւնը եղաւ, ինքնաբերաբար մակարդակը բարձրացում ունեցաւ: Տակաւին բաւական ընելիք կայ, որպէսզի այդ մակարդակի բարձրացումը իսկական մակարդակի բարձրացում ըլլայ:

«Ա».- Սակայն չե՞ք կարծեր, որ Հայագիտականի մէջ դասաւանդուած դասաւանդները կը գոհացնեն եւ հարցը կը մնայ ուսանողին:

Մ. Մ.- Ծիչդ է, ուսանողին որակը շատ կարեւոր է, երբ համալսարանները զտում ընեն, իրենց մտահոգութիւնը կ'ըլլայ մակարդակի պահպանում եւ աւելի բարձրացում: Այնպէս որ, խորքին մէջ համալսարանին տէրը դասախօսական կազմը չէ, դասախօսը իր պրպտումները կրնայ ընել, յօդուածները կրնայ գրել, գիտական աշխատանքը կրնայ տանիլ: Ուսանողն է, որ մակարդակ պիտի տայ համալսարանին, որովհետեւ ան է, որ քանի մը տարի ետք պիտի գործէ եւ անկէ պիտի ելլէ գիտնականը: Այդ ուսանողը վաղուան մտաւորականը պիտի ըլլայ, եւ այդ պատճառով որակը շատ կարեւոր է: Հայագիտականին մէջ, սփիւռքեան պայմաններու մէջ այդ զտումը ընելը այդքան ալ դիւրին չէ: Կը կարծեմ, որ մենք Հայագիտականի մէջ այդքան մեծ թիւ չունինք լաւ զտում կատարելու համար:

«Ա».- Սփիւռքեան տարածքին ցարարարութեան եղած են հայագիտական այլ ամպիոններ Լիբանանի եւ այլ շրջաններուն մէջ. այս բոլորին մէջ Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը ի՞նչ կշիռով կը ներկայանայ:

Մ. Մ.- Իմ հայեցողութեամբ աւելի գործնական նպատակ կը հետապնդէ Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը: Արեւմուտքի մէջ ժամանակէ մը ի վեր գոյութիւն ունի հայագիտական ամպիոն մը. հոս Լիբանանի մէջ գոյութիւն ունեցածները աւելի մասնագիտական ըլլալու նպատակն ու կարելիութիւնները ունեցած են: Ակադեմիական մակարդակի ուսումնասիրութեան, փնտռողի հաստատութիւններ եղած են: Հիմա զանազան շրջաններու մէջ կան հայագիտական ամպիոններ, սակայն անոնք գիտական իմաստով կ'ուսումնասիրեն հին ժողովուրդի մը պատմութիւնը, լեզուն եւ մշակոյթը: Այսինքն՝ անոնք առօրեայ մտահոգութենէ ծնունդ չեն առած: Հայագիտականի Հիմնարկը զուտ առօրեայ

մտահոգութեան եւ կարիքի արդիւնք է: Պէտք է նկատի ունենալ, որ սփիւռքահայութիւնը Եղեռնի 50ամեակէն ներս վերածնունդ մը ապրեցաւ: Այդ վերածնունդին արդիւնքն էր այս հիմնարկը եւ զանազան այլ կեդրոններ. այդ շրջանին էր նաեւ, որ ծաւալեցաւ հայկական երկրորդական վարժարաններու ցանցը:

Հայագիտականը շատ լաւ գործ ըրած է, անհրաժեշտութիւն մը եղած է, ինչ որ նաեւ կը վկայէ իր տուած արդիւնքը: Այսօր թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ Հայագիտականի շրջանաւարտները աւելի կամ նուազ չափով ցայտուն ներկայութիւն են: Սակայն Հայաստանի անկախութիւնը եւ Հայաստանի հետ յարաբերութիւնները նոր տուեալներ մէջտեղ բերած են եւ այդ է հաւանաբար պատճառը, որ մեր հաստատութեան ուսանողներուն թիւը պակսեցաւ վերջին հնգամեակին: Մէկ կողմէ չմոռնանք ըսելու, որ մենք կ'ապրինք այլ ընկերութեան մէջ, մենք պետութիւն չենք եւ մեր կարիքները սահմանափակ են: Եթէ այսօր 10 դպրոց ունինք, ուրեմն ունինք հայերէնի եւ պատմութեան առաւելագոյնը 15 ուսուցիչի կարիք. երբ անոնք այդ դիրքերը առնեն, տարիներ ետք է, որ կրկին կարիքը կ'ունենանք նոր ուսուցիչներու: Պետութիւնները իրենց կառոյցներուն մէջ կը պատրաստեն այն, ինչին կարիքը ունին, որովհետեւ բնականաբար մնացեալը աւելորդ, անգործ պիտի ըլլայ. մեր պարագային այդ գիտական ծրագրումը գոյութիւն չունի. մենք ունինք այն մտայնութիւնը, որ եթէ բան մը ստեղծուեցաւ, պէտք է մնայ: Ինչպէս որ ծառեր կը հօտեն, նաեւ ըստ կարիքի պէտք է որոշ կառոյցներ զօրացնել եւ ուրիշներ հանգստեան կոչել: Հայագիտականի պարագային ալ նոյնն է, ես պիտի չսպասեմ, որ անիկա ուշաթափ ըլլայ, այլ ուրիշ ծրագրումներ պէտք է կատարել: Հայագիտական կառոյցը անհրաժեշտ է, սակայն ի՞նչ ձեւով պէտք է ըլլայ, անիկա պայմանները պէտք է որոշեն: Պէտք է մտածել, որ ի՞նչ փոփոխութիւններ պէտք է կատարել յառաջդիմութեան համար:

«Ա».- Համազգայինի իրերայաջորդ Կեդրոնական վարչութիւններու որոշումով Հայագիտականի ուսումը առաջին օրէն անվերջաբեկ է եւ ասոր կողքին ուսանողներու տրուած է զանազան դիւրութիւններ: Կեդրոնական վարչութիւնը ցարդ ի՞նչպէս յաջողած է վերցնել այս բեռը եւ արդեօք ի՞նչ է ասոր գլխաւոր նպատակը:

Մ. Մ.- Նպատակը ուսուցիչ պատրաստելն է եւ անոր իրագործման համար ամէն զոհողութիւն պէտք էր կատարել: Համազգայինի կողքին, Հայագիտականի ծախսերուն օժանդակեցին այլ ազգայիններ եւ կազմակերպութիւններ եւ Դաշնակցութեան Բիւրոն: Երբ բան մը անվճար կը տրուի, աւելի գրաւիչ կը դառնայ: Եւ երբ մենք կ'ուզէինք բան մը իրագործել, չէինք կրնար պատնէշներ դնել, եւ խորքին մէջ այդ ձեւով մենք յաջողեցանք:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԳԱՂԱՓԱՐՆ ՈՒ ԾՆՈՒՆԴԸ

Լիրանանի մէջ հայագիտական ուսմանը բարձրագոյն դասընթացք կամ հիմնարկ ստեղծելու ծրագիրը շատոնց գոյուլթիւն ունեցած է Համազգայինի հիմնադիրներուն եւ յաջորդական կեդրոնական վարչութիւններու մտքին մէջ: Հայ Ճեմարանի հիմնումը ինքնին այդ մտահոգութեան արգասիքն է: Ճեմարանի կողքին եւ իրրեւ անոր լրացուցիչ, այդ օրերուն Նիկոլ Աղբալեանի կողմէ տրուած հրապարակային դասախօսութիւնները (հայ գրականութեան, բանահիւսութեան, Սայաթ Նովայի եւ այլնի մասին) ձեւով մը եկան հարստացնելու ուսուցիչներու եւ մտաւորականներու հայագիտական ծանօթութիւնները: Աւելի ուշ, Համազգայինի կազմակերպութեամբ գործեց հայագիտական երկամեայ դասընթացքը, որուն գլխաւոր դասախօսները եղան նշանաւոր գրագէտ Կոստան Ջարեան եւ պատմագէտ Գառնիկ Գիւլգալեան:

1970ական թուականներու սկիզբներուն Լիրանանի թէ՛ հայկական արտասահմանի այլեւայլ կեդրոններուն մէջ աւելի ուժգնութեամբ զգացուեցաւ հայոց լեզուի, գրականութեան եւ հայոց պատմութեան հմուտ մասնագէտ ուսուցիչներու պահանջը. պահանջ՝ զոր ի վիճակի չէին այլեւս հարկ եղած չափով բաւարարելու հայկական կրթական հաստատութիւններու հասցուցած շրջանաւարտները: Այս իրողութեան լոյսին տակ Համազգայինի կեդրոնական վարչութիւնը որոշեց ձեռնարկել համալսարանական մակարդակով հայագիտական բարձրագոյն հիմնարկի մը ստեղծման նախապատրաստական աշխատանքներուն: Կազմուեցաւ յատուկ յանձնախումբ մը, բաղկացած Գարեգին եպս. Սարգիսեանէ,



Երեւանի Պետական Լամալսարանին հետ համաձայնագիրի վերանորոգման հանդիսութիւն, 4 Ղեկտեմբեր 1996

Վահէ Սէթեանէ, Հրաչ Տասնապետեանէ, Շաւարշ Թորիկեանէ, Վահէ Օշականէ եւ Երուանդ Փամպուլեանէ, որոնց պարտականութիւն տրուեցաւ պատրաստելու հիմնարկին ուսումնական ծրագիրը: Ահա այս յանձնախումբին կազմած կրթական ծրագիրն է, որ հիմք ծառայեց Համազգային Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի դասաւանդութիւններուն, որոնք սկսած Ղեկտեմբեր 1974ին, 15 ուսանող-ուսանողուհիներով: Մեծ յոյսերով եւ խանդավա-

րութեամբ սկսած գործը Լիրանանի քաղաքացիական պատերազմին ստեղծած անապահովութեան պատճառով ընդհատուեցաւ: Չորս տարուան դադարէ ետք դասերը վերսկսան, բայց կրկին ոչ այնքան բնականոն քաղաքական եւ ապահովական պայմաններու մէջ: Սակայն, հակառակ այս իրողութեան, հայագիտական բարձրագոյն ուսմանը պահանջը շարունակեց ինքզինք պարտադրել եւ հայագիտական այս հիմնարկին գոյութիւնը անմիջական անհրաժեշտութիւն մնաց թէ՛ Լիրանանահայ եւ թէ՛ սփիւռքեան իրականութեան մէջ՝ այս բնագաւառին անհրաժեշտ մարդուժը պատրաստելու համար: Այս կարիքներէն թելադրուած՝ Հայագիտական Հիմնարկը շարունակեց իր առաքելութիւնը՝ ի գին մեծ զոհողութեանց եւ հակառակ իր դիմաց ծառայած զանազան դժուարութիւններուն: Այսպէս, 1979 Հոկտեմբերին հիմնարկին առաջին դասարանը վերակազմուեցաւ նոր ուսանող-ուսանողուհիներով: Յաջորդող տարիներուն դասարաններու յաւելումով մտնողը ցաւ հիմնարկին քառամեայ ընթացքը եւ 1983ին ան տուաւ 21 շրջանաւարտներու իր առաջին հունձքը:

ՀԻՄՆԱՐԿԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկին գլխաւոր կոչումը եղած է պատրաստել հայագիտական նիւթերու ուսուցիչներ, խմբագիրներ եւ ազգային-հասարակական կեանքի գործիչներ: Հայագիտական Հիմնարկը իր ստեղծման օրէն իսկ ունեցած է այս նպատակին իրագործման նպաստող կրթական ծրագիր մը, որ ուսանողներուն առիթ տուած է հայագիտական ուսման համար եական նիւթերու իւրացման առընթեր՝ խորապէս ուսումնասիրել մարդկային գիտութեանց նիւթերու պատկանող մասնագիտական նիւթեր: Այսպիսով, ուսանողներուն մատուցուած է համալսարանական համապարփակ ուսման եւ անոր համապատասխան մակարդակին պատշաճ ու ծրագիր:

Մինչեւ 1991 հիմնարկին կրթական ծրագիրը բաժնուած էր ուսումնական չորս տարեշրջաններու վրայ: Այդ թուականէն առիւն ծրագիրը կը գործադրուի երեք տարիներու ընթացքին, որոնց աւարտին ուսանողները կը ստանան Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկին վկայականը՝ վաւերացուած Հայաստանի Պետական Համալսարանին կողմէ: Այս վկայականը համազօր է ֆրանսական լիսանս կամ ամերիկեան պէչրըր աֆ արթց վկայականներուն:

Կրթական ծրագիրը կ'ընդգրկէ մասնագիտական երկու բաժանմունքներ.

- ա.- Հայոց լեզու եւ հայ գրականութիւն
- բ.- Հայոց պատմութիւն

Առաջին շրջանին (նախապէս՝ երկու, այժմ մէկ տարի) ուսանողները կը հետեւին հասարակաց ընդհանուր դասընթացքի, որուն ընթաց-

քին անոնց կը տրուին անհրաժեշտ գիտելիքներ հայոց լեզուի, հայ հին եւ նոր գրականութեան, ինչպէս նաեւ՝ ընդհանուր զարգացման գիտութիւններ: Երկրորդ տարեշրջանի սեմին անոնք իրենց նախասիրութեան կամ հակումներուն համաձայն կ'ընտրեն վերոյիշեալ բաժանմունքներէն մէկը կամ միւսը, ուր առիթ կ'ունենան հայ գրականութեան կամ հայոց պատմութեան բնագաւառներուն մէջ խորացնելու իրենց ծանօթութիւնն ու գիտութիւնը:

Կրթական ծրագիրին կողքին մշակուած է նաեւ հիմնարկին «Զարգացման ծրագիրը», որ մանրամասնօրէն կը սահմանէ հայագիտական բարձրագոյն ուսմանը այս հաստատութեան հետապնդած նպատակները, միաժամանակ նշողով այն միջոցները, որոնց աստիճանական գործադրութեամբ կարելի պիտի ըլլայ ոչ միայն ընդարձակել հիմնարկին գործունէութեան դաշտը, այլ նաեւ՝ անոր ապահովել ուսումնական եւ մասնագիտական բարձր մակարդակ: Այս լոյսին տակ պարբերաբար տեղի ունեցած են ծրագրային անհրաժեշտ վերամշակումներ, սրբագրուած են նկատուած թերութիւնները, եւ կամ ներկայացող պահանջներու համաձայն՝ կատարուած են լրացումներ: Այսպէս, նկատուեց, որ թեկնածու ուսանողներու կարելի համեմատութիւն մը հայոց լեզուի անբաւարար գիտութեամբ կը ներկայանայ հայագիտական ուսմանը, դասաժամերու զգալի յաւելումով աստիճանաբար շեշտուած են գրաբարի եւ մասնաւորաբար արեւմտահայերէնի դասաւանդութիւնները: Նկատուելի կերպով աւելցած են ծրագիրին մէջ մանկավարժական եւ մեթոտաբանական դասանիւթերը այնպիսի եղանակով մը, որ անոնց ամբողջութիւնը համապատասխանէ ամերիկեան պէչրըր աֆ արթցին կից տրուող «նորմալ տիփլոմա»ին:

141 ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐ՝ ԴԻՄԱԳԻԾՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ՆԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆԻՄՆԱՐԿԻՆ



Որեւէ աշխատանք, ծրագիր կամ գործունէութիւն իր իսկական արժէքով կը ներկայանայ, երբ անոր տուած արդիւնքը արժեւորուի եւ դնահատուի:

Ինչպէս որեւէ կառոյց կամ հաստատութիւն, Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը եւս 1983էն ի վեր հանրութեան կը ներկայանայ իր շրջանաւարտներով, որոնց ուսերուն դրուած է Հայագիտականի անունը բարձր պահելու եւ իրենց աշխատանքով անոր երախտապարտ

մնալու պարտականութիւնը:

1974ին հիմնուած այս հիմնարկը տարիներու ընթացքին տուաւ այնպիսի շրջանաւարտներ, որոնք իրենց աշխատանքով եւ լիբանանահայ թէ համագաղութային կեանքին մէջ տարած գործունէութեամբ լեցուցին հսկայ բաց մը մեր իրականութեան մէջ:

2001 - 2002 կրթական տարեշրջանի աւարտին, Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը ունեցաւ իր 20րդ հունձքը, իր շրջանաւարտներուն

թիւը հասցնելով 141ի:

Այս շրջանաւարտները գլխաւորաբար կը գործեն Լիբանանի մէջ: Լիբանանահայութեան կեանքին մէջ աշխատանք տանող 87 շրջանաւարտներէն 62ը ուսուցիչներ են հայկական վարժարաններու մէջ: Տարիներու ընթացքին «Ազդակ» օրաթերթի զանազան բաժանմունքներուն մէջ աշխատած են 12 շրջանաւարտներ, իսկ այսօր «Ազդակ»ի գլխաւոր 4 խմբագիրները եւ խմբագրական կազմէն 4 անդամներ շրջանա-

ւարտ են Հիմնարկէն:

Ասոնց կողքին, Հայագիտականի շրջանաւարտները կ'աշխատակցին զանազան պաշտօնաթերթերու, պարբերաթերթերու եւ ամսաթերթերու, կը վարեն ազգային զանազան կառոյցներու տնօրէնութեան, քարտուղարութեան եւ գործավարութեան պաշտօնները:

Սուրիոյ մէջ կան 7 շրջանաւարտներ, որոնք ուսուցչութեան պաշտօններ կը վարեն Դամասկոսի եւ Հալէպի մէջ: Քանատայի մէջ կը գտնուին Հայագիտականի 8 շրջանաւարտներ, որոնք կը վարեն ուսուցչութեան, խմբագրութեան եւ գործավարութեան պաշտօններ: Անգլիոյ, Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Շուէտի մէջ կան մէկական շրջանաւարտներ, իսկ Քուէյթի մէջ՝ երկու: Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ գործող շրջանաւարտներուն թիւը կը հասնի 11ի: Անոնք ուսուցչութեան կողքին կը վարեն խմբագրութեան, տնօրէնութեան եւ գործավարութեան պաշտօններ:

Ֆրանսայի երկու շրջանաւարտները կ'աշխատակցին տեղւոյն մամուլին եւ հայկական դպրոցներուն մէջ: Պարսկաստանի եւ Յունաստանի մէկական շրջանաւարտները ուսուցիչներ են տեղւոյն դպրոցներուն մէջ:

Հայաստանի մէջ կան 9 շրջանաւարտներ, որոնք իրենց ուսումը շարունակելու կողքին կը գործեն ազգային զանազան հաստատութիւններու մէջ:

Լիբանանի եւ այլ գաղութներու մէջ գործող շրջանաւարտներու այս պատկերը ինքնին կը վկայէ այն իրողութիւնը, որ Հայագիտական Հիմնարկը ըստ էութեան կը ծառայէ իրեն ճշգրտած առաքելութեան, որն է՝ պատրաստութիւնը հայ գիրի եւ գրականութեան, հայ դպրոցին եւ ընդհանրապէս հայ մշակոյթին ջահը մշտավառ պահող երիտասարդ թարմ ուժերու, որոնց պահանջը օրէ օր աւելի սուր կերպով կը զգացուի հայ կեանքին մէջ:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԸ ՍՓԻՌՔԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ		
ԵՐԿԻՐ	ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒ ԹԻ	ԱՍՊԱՐԷՋ
ԼԻԲԱՆԱՆ	87	ուսուցիչ, խմբագիր, տնօրէն, քարտուղար, գործավար
ՍՈՒՐԻԱ	7	ուսուցիչ
ՔՈՒԷՅԹ	2	ուսուցիչ
ՇՈՒԷՏ	1	ուսուցիչ
ՔԱՆԱՏԱ	8	ուսուցիչ, խմբագիր
ԱՆԳԼԻԱ	1	գործավար
ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐ	1	ուսուցիչ
ԱՐԵՄՍԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐ	11	ուսուցիչ, խմբագիր, տնօրէն, քարտուղար, գործավար
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ	1	ուսուցիչ
ՅՈՒՆԱՍՏԱՆ	1	ուսուցիչ
ՖՐԱՆՍԱ	2	ուսուցիչ, խմբագիր
ՀԱՅԱՍՏԱՆ	9	քարտուղար, գործավար

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՋԵՐՄ ՄԹՆՈԼՈՐՏ, ԱՇԽՈՒԺ ԿԵԱՆՔ



սիրով թեամբ մէկ կամ աւելի դասընթացներու հետեւիլ միայն:

Ուսանողութեան մեծամասնութիւնը, յատկապէս վերջին տարիներուն, կու գայ Լիբանանէն եւ Սուրիայէն: Հիմնադրութեան առաջին տարիներուն հիմնարկը ունեցած է Պարսկաստանէն եկող շուրջ 20 ուսանողներ: Արտասահմանեան երկիրներէն եկած ուսանողներուն համար ստեղծուած է զիջերթիկի դրութիւն:

Կարգ մը դաղութներու անմիջական կարիքներուն հասնելու համար, հաստատուած են նաեւ խտացեալ, անհատական դասընթացներ: Այս ծիրին մէջ հիմնարկը ունեցած է 3 ուսանողութիւններ Պոլսկարիայէն, 2 Յունաստանէն եւ մէկ՝ Միացեալ Նահանգներէն:

Հիմնարկի ընդհանուր ուսանողութիւնը մեծաթիւ չէ եղած ընդհանրապէս. լաւագոյն պարագաներու անիկա հասած է 50ի սահմաններուն, եւ ասիկա՝ երբ ուսման ամբողջական ձրի դրութիւն



Համագոյնի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի դռները լայնօրէն բաց են Բ. Պարալօրէա ունեցող կամ հայկական երկրորդական վարժարան աւարտած բոլոր հայ աշակերտներուն առջեւ: Հիմնարկ կրնան յաճախել նաեւ օտար կրթական հաստատութիւններէ վկայեալները, պայմանով որ անոնք ունենան հայերէնի բաւարար ծանօթութիւն՝ հիմնարկի դասընթացներուն հետեւելու համար:

Գոյութիւն ունի նաեւ ազատ ունկնդիրի դրութիւն, որ նախատեսուած է բոլոր անոնց համար, որոնք կը վաճառեն իրենց նախա-

կը կիրարկուէր հիմնարկին մէջ: Պատերազմը բնականաբար այս իմաստով կարելոր անդրադարձ ունեցաւ, սակայն խորքին մէջ այս իրավիճակին իսկական պատճառները պէտք է փնտռել այն իրողութեան մէջ, որ արդի փամանակներուն, նիւթական ակահովութեան եւ ապագայ բարօր կեանքի հեռանկարներ պարզող այլ ասպարէզներ այնքան շատ են ու մանաւանդ՝ հրապուրիչ երիտասարդութեան համար, որ դժուար թէ ստուար թիւով թեկնածուներ գան նուիրուելու հայագիտութեան եւ այդ ճամբով՝ մանկավարժական կամ ազգային հասարակական ծառայութեան:

Սակայն, հակառակ այս իրողութեան, հիմնարկը միշտ տուած է պատուաբեր արդիւնքներ եւ անոր շրջանաւարտները քաջ գիտակցելով զիրենք սպասող դժուարութիւններուն, շարունակած են իրենց երթը, հաւատարմով իրենց ընտրած կարելոր ուղիին եւ սփիւռքեան իրականութեան մէջ մեծ դերակատարութիւն ունեցած են եւ կ'ունենան:

Հիմնարկէն ներս, ծրագրային դասաւանդութիւններու եւ գործնական աշխատանքներու կողքին, միշտ գոյութիւն ունեցած է ուսանողական ջերմ մթնոլորտ եւ ընկերային աշխուժ կեանք: Տնօրէնութեան կամ Ուսանողական խորհուրդի նախաձեռնութեամբ, կազմակերպուած են հրապարակային եւ ներքին ձեռնարկներ, ցուցահանդէսներ, դասախօսութիւններ, պաշտօնական եւ մտերմիկ հանդիպումներ մտաւորականներու, գրողներու եւ ար-

ւեստագէտներու հետ: Հայաստանի եւ Արցախի անկախացումէն ետք, հիմնարկը դարձաւ այն կայանը, ուր ուսանողներն ու շրջանաւարտները առիթը ունեցան ծանօթանալու հայրենի մտաւորականութեան եւ հասարակական կեանքի բազմաթիւ դէմքերուն՝ Ռուբէն Յովսէփեան, Ռազմիկ Դաւոյեան, Սօս Սարգսեան, Աննա Արեւշատեան, Վահան Յովհաննիսեան, Ռուբէն Յակոբեան, Գէորգի Պետրոսեան, Արմէն Սարգսեան, Շաղիկ - Տորա Աղբալեան, Ռուբէն Աղբալեան, Արմէն Սմբատեան, Դաւիթ Յարութիւնեան, Լեւոն Հախվերտեան, Ժաննա Գալստեան, Ռուբէն Հախվերտեան, Նորա Տայեան եւ շատ ուրիշներ:

Այս բոլորին կողքին հիմնարկին մէջ ուսանողական առօրեայ կեանքին եւ թէ յատուկ ձեռնարկներուն անպակաս եղաւ ընկերային ջերմ մթնոլորտը, որ ուսանողներն ու դասախօսները միշտ պահեց իրարու մօտ: Տարուան ընթացքին ուսանողները յաճախ կը կատարեն պտոյտներ, հաւաքոյթներ եւ խրախճանքներ:

Իսկ այս բոլորը վերջին հաշուով կը ծառայեն մշակութային, գաղափարական եւ ընկերային մթնոլորտով յագեցնելու անոնց առօրեան: Գոհունակութիւն է հաստատել, որ հիմնարկին ուսանողները, գրեթէ առանց բացառութեան, իբրեւ անդամ երիտասարդական, ուսանողական եւ մշակութային կազմակերպութիւններու, հայ կեանքին մէջ կը բերեն իրենց գործօն մասնակցութիւնը:

HAIGAZIAN UNIVERSITY

A UNIQUE PART TIME BA/BS PROGRAM

Haigazian University has been dedicated to excellence in liberal arts, professional education and career orientation since its establishment in 1955.

The BA., BS., MA and MBA degrees offered are recognized by the Lebanese government and the Association of American International Colleges and Universities.

The University provides first class education, and inspires graduates to serve their communities and excel in a multicultural world.

Haigazian University recognizes the aspirations of the many talented working men and women who did not have the opportunity to complete their education and are seeking a degree to enhance their professional image. For this reason, Haigazian University has created this unique BA/BS program, ideally suited for you.

The main advantage of the program is its flexibility, whereby qualified applicants can choose any undergraduate major and complete it within 7 years.

ENTRANCE REQUIREMENTS

Haigazian University is open to all students who are academically qualified and who are willing to work with our highly respected faculty and receive a top quality Haigazian education.

- Applicants to the part - time bachelors degree, should be:
- 1.- Working adults, 25 years and above, who seek a university degree
- 2.- Holders of the Lebanese Baccalaureate or its equivalent.

Come and apply now!
Haigazian University
Hamra, Kantari
Telefax: (01) 353010/1/2 - 349230/1
E-mail: admissions@haigazian.edu.lb
registrar@haigazian.edu.lb
Visit our home page:
www.haigazian.edu.lb

ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Իր գոյութեան նպատակին՝ հայ մշակույթին եւ ազգային կեանքին նուիրեալ մարդու զգացմունքները համար նախապայման էր, որ Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը իր շուրջ համախմբէր դասախօսական որակաւոր կազմ մը:

Իր հիմնադրութեան սկզբնական շրջանէն իսկ հիմնարկին մասնագիտական խիտ ծրագիրին դասաւանդման համար գործի լծուած են տարբեր մասնագիտութիւններու տէր դասախօսներ: Լիբանանահայ մտաւորականութեան գրեթէ մեծ մասը պաշտօնավարած է Հայագիտական Հիմնարկին մէջ՝ իւրաքանչիւրը իր մասնագիտութեան ճամբով նպաստելով Հիմնարկին ուսումնական կեանքին վերելքին: Հայագիտական հիմնարկին մէջ իրենց դրոշմը ունեցած դասախօսներէն նշենք Մուշեղ Իշխանի, Հրաչ Տասնապետեանի (1974-75 տարեշրջանի հիմնարկի տնօրէն), Երուանդ Փամպուկեանի, Շաւարշ Թորիկեանի, Արտաշէս Տէր Խաչատուրեանի, Յակոբ Պարսումեանի, Վազգէն էթիբեմեզեանի, Պօղոս Սնապեանի, Ջարեհ եպս. Ազնաւորեանի, Գրիգոր Շահինեանի, Նազարէթ Պէրպէրեանի եւ Աբրահամ Ալիքեանի անունները:

Երեւանի Պետական Համալսարանին հետ կնքուած համաձայնագիրը, իր կարգին, առիթ ընծայեց, որ Հայագիտական Հիմնարկի դասախօսական կազմին մէջ ներառուին հայրենի գրականագէտներ եւ պատմագէտներ, որոնց թիւը եղած է աւելի քան տասը: Անոնք են Մկրտիչ Մազմանեան, Յովիկ Մելիքսէթեան, Յարութիւն Թոփիկեան, Պետրոս Յովհաննիսեան, Հենրիկ Էդոյեան, Վլատիմիր Բարխուդարեան, Կիմ Աղաբէկեան, Էդիկ Դանիէլեան եւ Երուանդ Խաչատրեան:

Պէտք է նշել, որ հիմնարկը միաժամանակ օժտուած է Լիբանան հաստատուած հայրենի արուեստագէտներու ներկայութեանն եւ զանոնք հրաւիրած՝ իրենց մասնագիտութիւններու ծիրէն ներս դասընթացքներ տալու եւ կամ՝ դասախօսութիւններ եւ զրոյցներ կազմակերպելու:

Հայագիտական Հիմնարկի դասախօսները իրենց պատրաստուածութեամբ, մօտեցումով եւ մանաւանդ նուիրումով ուսանողներուն

ՏԱՐԵՇՐՁԱՆ	ՊԱՏՄԱԳԵՏ	ԳՐԱԿԱՆԱԳԵՏ
1991 - 1992	Փրոֆ. Յովիկ Մելիքսէթեան	Պրն. Աբրահամ Ալիքեան
1992 - 1993	Փրոֆ. Պետրոս Յովհաննիսեան	Փրոֆ. Սէյրան Գրիգորեան
1993 - 1994	Փրոֆ. Բաբգէն Յարութիւնեան	Փրոֆ. Սարգիս Փանոսեան
1994 - 1995	Ակադեմիկոս Վլատիմիր Բարխուդարեան	Փրոֆ. Գառնիկ Անանեան
1995 - 1996	----	Փրոֆ. Յենրիկ Էդոյեան
1996 - 1997	Ակադեմիկոս Վլատիմիր Բարխուդարեան	Փրոֆ. Կիմ Աղաբէկեան
1997 - 1998	Փրոֆ. Էդիկ Դանիէլեան	Փրոֆ. Կիմ Աղաբէկեան
1998 - 1999	----	Փրոֆ. Կիմ Աղաբէկեան
1999 - 2000	----	Փրոֆ. Երուանդ Խաչատրեան
2000 - 2001	----	Փրոֆ. Երուանդ Խաչատրեան

համար հանդիսացած են նուիրումի կենդանի օրինակներ: Զանազան նիւթերու մասնագէտներու ներկայութիւնը, հայագիտական նիւթեր դասաւանդող դասախօսներու կողքին, Հայագիտական Հիմնարկէն ներս կը ստեղծէ ոճի եւ մանաւանդ մօտեցումներու բազմազանութիւն՝ միաժամանակ ուսանողներուն ընծայելով համապարփակ ուսման եւ ակադեմական-գիտական այլ մարզերէ ներս տարրական գիտելիքներ ամբարելու ու զանոնք զարգացնելու առիթ: Այսպէս, կրթական հարուստ ծրագիրին շնորհիւ գրականութիւն, հայոց պատմութիւն, մատենագիտութիւն ու գրաբար դասաւանդող մասնագէտներու կողքին, ուսումնական յաջողական տարիներու ընթացքին հիմնարկին մէջ ներկայութիւն եղան տնտեսագիտութիւն, իմաստասիրութիւն, միջազգային հին եւ արդի գրականութիւն, քաղաքական գիտութիւններ, մանկավարժութիւն եւ հոգեբանութիւն ուսուցանող դասախօսներ:

Առաքելեան Կարօ	- Հայոց Լեզու - Հայոց Լեզուի Դասաւանդման մեթոտիկա
Բագրատունի Յակոբ	- Ներածութիւն քաղաքական գիտութեանց
Գազանճեան Ալիս	- Ածման Հոգեբանութիւն - Ուսուցանելու եւ սորվելու սկզբունքները - Գործնական մանկավարժութիւն
Գանտահարեան Գեորգ	- Մատենագրութիւն - Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւն - Աշխարհագրութիւն Պատմական Հայաստանի
Էթիբեմեզեան - Պերթիզեան Արփի	- Ընդհանուր հոգեբանութիւն
Մարտիրեան Վարուժան	- Հայ մշակույթ (ճարտարապետութիւն-քանդակագործութիւն)
Յովհաննիսեան Կարօ	- Ժամանակակից Հայոց Պատմութիւն - Հայ յեղափոխութեան եւ կուսակցութեան պատմութիւն
Պերթիզեան Յովիկ	- Գրաբար - Հայոց Լեզուի - Հին Յունական գրականութիւն - Հին Հռոմեական գրականութիւն
Սնապեան Պօղոս	- Հայ արդի գրականութեան պատմութիւն - Արեւելահայ գրականութիւն - Արեւմտահայ գրականութիւն
Փամպուկեան Երուանդ	- Հայոց պատմութիւն - Քննական Հայոց պատմութիւն - Հայոց պատմութեան աղբիւրագիտութիւն
Փափազեան Սիլվա	- Ներածական մանկավարժութեան

Հատուած՝ Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի Ա. վկայականաց բաշխման հանդիսութեան առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոսին արտասանած պատգամէն

«Մենք առհասարակ, որպէս հայութիւն, զոհերն ենք ինքնախաբէութեան մը, սխալ մօտեցումի մը, երբ առհասարակ օտար միջոցներով եւ չափանիշներով տեղ հասած անձերուն եւ ձեռնարկներուն մեծ արժէք կու տանք եւ մենք մեր սեփական ջանքերուն նուազ արժէք կ'ընծայենք:

«Հայագիտական Հիմնարկի շրջանաւարտութեան այս համատեղ նշումը այսօր պէտք է մեր բոլորին համար՝ եւ շրջանաւարտներուն, եւ ուսուցիչներուն, եւ ծնողներուն, եւ «Համազգային»ի պատասխանատուներուն, դառնայ մէկ դարձակետ: Մենք մեր սեփական ուժերուն գնահատանքը նիշդ կերպով ըմբռնենք եւ յարգել գիտնանք այն վաստակը, որ կ'իրագործուի այստեղ, առանց շողջողուն անուններու, առանց այլ տեսակի օգնական կամ յենարան եղող մակդիրներու եւ շահուած այլ «առաւելութիւն»ներու՝ առաւելաբար օտար ազգերու եւ շրջանակներու ու պայմաններու կապուած:

«Այսօր ա'յսքան շրջանաւարտ ունենալ, այսքան ուսուցիչներ, մտաւորականներ, գրողներ, հրապարակագիրներ եւ հասարակական գործիչներ ընծայել ազգին՝ պատիւ մըն է, պարտք մը ըլլալով շահուած պատիւ մը»:

5 Յուլիս 1993

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԵՒ ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՍԻԶԵԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ



27 Յունիս 1991. Հայագիտական Հիմնարկին եւ Երեւանի Պետական Համալսարանին միջեւ համաձայնագիրի ստորագրութիւն



4 Դեկտեմբեր 1996. Երեւանի Պետական Համալսարանին հետ համաձայնագիրի վերանորոգում

Հայագիտական Հիմնարկի յիշատակելի թուականներէն մէկն է 27 Յունիս 1991ը, երբ Հիմնարկին եւ Երեւանի Պետական Համալսարանին միջեւ կնքուեցաւ ուսումնագիտական համաձայնագիր մը: Աննախընթաց երեւոյթ հանդիսացող այդ համաձայնագիրով Հայաստանի պետութիւնը նախ Համագալիսի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը ճանչցաւ իբրեւ Հայագիտական բարձրագոյն ուսման հաստատութիւն ու ապա զայն առաւ իր հովանաւորութեան տակ, ամբողջութեամբ ընդունեց Հիմնարկին կրթական ծրագիրը, ինչպէս նաեւ՝ անոր յանձնած աւարտական վկայականը: Այս համաձայնագիրին ծիրին մէջ Հիմնարկին վկայականը ունեցող շրջանաւարտները կրնան արձանագրուիլ Երեւանի Պետական Համալսարանի չորրորդ կարգը եւ երկու տարուան լրացուցիչ ուսումով հնարաւորութիւն կ'ունենան տիրանալու համալսարանի վկայականին, որ համազօր կը նկատուի մագիստրոս արուեստից վկայականին: Հիմնարկին թերաւարտ ուսանողները եւս կրնան իրենց ուսումը շարունակել Երեւանի մէջ՝ համապատասխան կարգ ընդունուելով:

մագործակցութիւնը շօշափելի իրականութիւն դարձած է եւ տուած իր արդիւնքը:

Ձոյգ հաստատութիւններուն միջեւ հնգամեայ ջերմ գործակցութեան իբրեւ արդիւնք՝ 4 Դեկտեմբեր 1996ին, ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին եւ պաշտօնական այլ անձնաւորութիւններու, տեղի ունեցաւ համաձայնագիրի նորոգութիւն:

Անցնող տարիներուն արձանագրուած գործակցութեան ծի-

րին մէջ կարելի է թուել հետեւեալները:-

1.- Հիմնարկին մէջ դասաւանդուելու հրաւիրուեցան Երեւանի Պետական Համալսարանի տասներկու մասնագէտ դասախօսներ, որոնք դասաւանդեցին գրականութեան եւ պատմագիտութեան նիւթեր: Փոխադարձաբար, Հիմնարկին դասախօսներէն Հրաչ Տասնապետեան հրաւիրուեցաւ դասաւանդելու հայ ազատագրական շարժման պատմութիւնը:

2.- Տեղի ունեցան գրական եւ հրատարակչական բնոյթի փոխանակումներ:

ա. Ակադեմիկոս Վլատիմիր Բարխուդարեանի հետ գործակցաբար պատրաստուեցաւ Հայոց Պատմութեան դասագիրքը (միջնակարգ Ա. տարի):

բ. Երեւանի Պետական Համալսարանի դասախօսներուն տրամադրուեցան Նիկողայոս Ադոնցի, Նիկոլ Աղբալեանի, Վազգէն Շուշանեանի, Լեւոն Շանթի եւ Կոստան Զարեանի արխիւները:

3.- Ուսանողական մակարդակի վրայ-

ա. Երեւանի Պետական Համալսարանին կողմէ հնարաւորութիւն տրուեցաւ, որ Հիմնարկին շրջանաւարտներէն 16 հոգի մասնագիտական իրենց ուսումը շարունակեն հեռակայ կարգով:

բ. Տնօրէնութեան քաջալերանքով Հիմնարկին ուսանողներէն 14ը մասնագիտական իրենց ուսումը շարունակեցին Երեւանի Պետական Համալսարանին ներս:

գ. 1996-1997 կրթական տարեշրջանին Երեւանի Պետական Համալսարանի շրջանաւարտներէն Լուսինէ Գալստեան հետեւեցաւ արեւմտահայերէնի յատուկ դասընթացքի՝ առ ի պատրաստութիւն «ասպիրանտուրա»ի:

դ. Գործակցութեան այս ծիրին մէջ Հիմնարկը հիւրընկալեց Երեւանի Պետական Համալսարանի մանկավարժական ամպիոնի վարիչ Նազիկ Յարութիւնեանը, ամբողջացնելու «Հայկական վարժարաններու կրթական համակարգը՝ Սփիւռքի գաղութներուն մէջ» խորագիրով իր ուսումնասիրութիւնը:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

Գրեթէ հինգ տարի առաջ, երբ հարց բարձրացուեց Համագալիսի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը Երեւանի Պետական Համալսարանի հետ ինչ-որ կերպ գործակցաբար միաւորելու ուղղութեամբ, մեր ցնծութեանը սահման չկար, որովհետեւ դրա մէջ տեսնում էինք Համագալիսի գլխաւոր «մէկ ազգ, մէկ հայրենիք, մէկ մշակոյթ» կարգախօսի իրագործման եւ առաջին հռչակումը, եւ առաջին գործնական քայլը, եւ յոյսի անսպառ պաշարներ, թէ վաղը ինչ հրաշալի իրագործումներ են լինելու: Գործակցութիւն չասենք, երկու հաստատութիւնների գրեթէ միաւորման պայմանագիրը կնքելու պատմական իրողութեան բոլոր մասնակիցները համակուծ էին ազգային այն խոր գիտակցութեամբ, թէ անկախութեան ձեռք բերելու բաւականաչափ շփոթ եւ շուար կացութեան մէջ Սփիւռքը Հայրենիքին ոչ միայն նիւթական միջոցներ ունի տալու, ոչ միայն կարող է սատարել Ղարաբաղի ազգային ազատագրական պատերազմին, այլեւ օտար եզերքների դժուարագոյն պայմանների մէջ իր գոյութիւնն ապահովելով՝ հայրենիքին է նուիրաբերում իր պահպանած ամենաթանկը՝ ազգային ոգին, ազգային ինքնութեան իր հաւաստիացումը, այսուհետեւ միասին, միանպատակ ապրելու իր անկրկնելի կամքը: Հարկ է նշել, որ հէնց այդ ոգեւորութեամբ Հայագիտականի շրջանաւարտները եկան Հայաստան եւ, անտեսելով ուսումնառութեան բազմաթիւ դժուարութիւններ՝ լրացուցին իրենց ուսումը, վերադարձան Սփիւռք եւ այսօր օգտաշատ աշխատանք են կատարում կրթութեան եւ ազգային մտաւոր կեանքի ասպարէզներում:

ՌԱԶՄԻԿ ԴԱԻՈՅԵԱՆ

20 Յունիս 1995

Համաձայնագիրը նաեւ կ'ընդգրկէ երկու հաստատութիւններուն միջեւ գործակցութեան այլ մարզեր, ինչպէս՝ դասախօսներու, ուսանողներու, կրթական ծրագիրներու, գրականութեան եւ հրատարակութեան փոխանակումներ, կրթական սերտ կապերու, միատեղ համագումարներու կազմակերպում եւ այլն:

Անցնող տասնամեակին երկու հաստատութիւններուն միջեւ հա-

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՄԱՍԻՆ

Հայրենիքի մը պայմաններում մեջ հայագիտական հիմնարկ մը սովորական բան է: Սակայն սփիւռքեան պայմաններում մեջ անիկա սեփական լեզուի ու մշակույթի հանդեպ գերագոյն սեր է, որովհետեւ գերագոյն գոհողութեամբ միայն կարելի է ստեղծել ու ոտքի պահել: Եւ պայմանագանց սերն է միայն, որ կը մղէ այդպիսի գոհողութեան՝ ոչինչ համարելով անյաղթահարելի դժուարութիւններն անգամ:

Հայ լեզուին, հայ պատմութեան, հայ գիրին ու հայ մշակույթին հանդեպ անպարագրելի այդ սիրոյն ծնունդն է Համագայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը, եւ այնտեղ իր հոգիին ու մտքին սնունդը առնող իւրաքանչիւր ուսանող այդ սիրոյն լուսաթիթեռը պէտք է ըլլայ ու մնայ իր կեանքին մէջ:

ԶԱՐԵՀ ԵՊՍ. ԱԶՆԱՌՐԵԱՆ

Ինչպէս գիտէք, վերջին 2 - 3 տասնամեակներուն հայագիտական առարկաներու կա-

պակցութեամբ մեր վարժարանները անհրաժեշտ արդիւնքը չէին արձանագրեր, բայց որովհետեւ խիստ պէտքը կը զգացուէր նոյն նիւթերը անձնաւորող, նոյն նիւթերուն մէջ իրենք զիրենք արժեւորելու բաղձանք ունեցող, ապա նաեւ մեր հաստատութիւններուն մէջ ծառայելու կարօտով ապրող տարրերու, մեր կրթական եւ կուսակցական մարզերուն ներկայացուցիչները իմաստութիւնը ունեցան մտածելու այդ նիւթերը առաւելագոյնս ջամբելու օճախ մը ստեղծել: Այսպիսով հիմնդրուեցաւ Հայագիտական Հիմնարկին, որ ըստ իս, արդարացուց իր վրայ դրուած յոյսերը այնքան, որքան կը թոյլատրէին մեր յատկապէս ժամանակային միջոցները:

Չնայած այս իրականութեան՝ ընդհանրապէս Հայագիտականի շրջանաւարտները այսօր կը լեցունեն զգալի բաց մը թէ՛ մեր անմիջական իրականութեան մէջ եւ թէ՛ հեռավոր փերուն:

Երբ կ'անդրադառնանք այս իրականութեան, անպայման մեր մտածողութեան մէջ կը ձեւակերպուի անխուսափելիօրէն սա մտածումը. ի՞նչ պիտի ընէինք, ի՞նչպէս պիտի լեցնէինք այն բա-

ցերը, որոնց մէջ այսօր մեր շրջանաւարտները կը ներկայանան իբրեւ աշխուժ եւ արդիւնաւոր գործօններ:

Պարկեշտ պիտի չըլլար չտեսնել ու չզննատել այս արդիւնքը:

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Համագայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկը, արտասահմանի մէջ, կրթական այն հաստատութիւններէն է, որ իր ուսումնական ծրագիրով, ամբողջութեամբ նուիրուած է խոր նախադասութեան, մեր պատմութեան, գրականութեան, լեզուի, աշխարհաբարբար, մատենագրութեան, հայ եկեղեցւոյ, Հայաստանի աշխարհագրութեան եւ այլն: Լուսնցքային դասընթացք մը չէ. ամբողջականօրէն հայ ժողովուրդի քաղաքական-տնտեսական, մշակութային արտայայտութեանց խոր ծանօթացումով կը հարստացնէ ուսանողը:

Սփիւռքեան այլասերող պայմաններու տակ, անհրաժեշտութիւն է այս հիմնարկը, որուն շրջանաւարտները, այսօր, հայ կեանքի կրթական-հասարակական, գրական

մարզերուն եւ մամուլի մէջ իրենց ներկայութեամբ կարելորդերակատարութիւն ունին:

Ներկայ հանգրուանին մեր մտածման սեւեռակետը պէտք է դառնայ ՄԱՐԴՈՒԺԻ պատրաստութիւնը. մասնաւորաբար հայեցի դաստիարակութեան մարզէն ներս:

ԳԵՈՐԳ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

Ճակատագիրի բերումով մեր ժողովուրդը սփռուել է աշխարհով մէջ եւ վիթխարի ջանքեր է գործադրում արեւի տակ իբրեւ հայ ապրելու համար: Այդ դժուարին, ամէնօրեայ մաքառում պահանջող գործում անգնահատելի է Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի դերը: Նրա բազմաթիւ շրջանաւարտները կեանքի ամենատարբեր ոլորտներում իրենց նպաստ են բերել եւ բերում են հայապահպանութեան գործին:

ՆՈՐԱՅՐ ԱՌԱՔԵԼԵԱՆ
ԵՊՀ-Ի ՆԱԽԿԻՆ
ՌԵԿՏՈՐ, ԳԱԱ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

«ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԻՈՐՈՒՄԸ ՏԱԼՈՒ ԿԵԴՐՈՆՆ Է...»

Շարունակուած՝ Ա. Էջէն

կան նաեւ մասնագիտական հակում ունեցողներ, որոնք կրնան ուղղուել դէպի մասնագիտական ուսում: Այստեղ պէտք է ըսեմ, որ մեր շրջանաւարտներուն ճնշիչ մեծամասնութիւնը Լիբանանէն ներս թէ՛ դուրս կը գործէ այն սպարէզներուն մէջ (կրթական - մանկավարժական, խմբագրական, ազգային հաստատութիւններ), որոնց համար պատրաստուած են: Եւ քիչ չէ թիւը այն շրջանաւարտներուն, որոնցմով հիմնարկը կը հպարտանայ:

«ԱԶԴԱԿ».- Հայագիտականի կրթական ծրագիրը որքանօ՞վ կը նպաստէ ուսանողներու մասնագիտացման:

Ե. Փ.- Մեր կրթական ծրագիրը մասնագիտացման նպատակով համար մտայնացուած է: Երբ այս ծրագիրը կը կազմէինք, անիկա դուրս եկաւ այնպիսի եղանակով, որ հետագային, երբ Երեւանի Պետական Համալսարանի գրական եւ պատմագիտութեան բաժանմունքին հետ համագործակցութեան առիթ եղաւ, մեզի համար մեծ ուրախութեամբ, բայց ի մեծ զարմացում մեր հայրենի գործընկերներուն, պարզուեցաւ, որ շատ քիչ տարբերութեամբ երկու ծրագիրները կը համապատասխանէին իրարու: Այնպէս որ, փոքր լրացումներով կամ սրբագրութիւններով կարելի եղաւ այնպիսի դրութիւն ստեղծել, որ Հայագիտական Հիմնարկի շրջանաւարտները ուղղուին Երեւանի Պետական Համալսարան եւ իրենց այստեղի ուսումին: Այդ պատճառով ալ չորս տարիներու ծրագիրը խտացուցինք երեք տարիներու մէջ, որպէսզի փոխան վեց տարուան ուսանողները իրենց ուսումը ամբողջացնեն

հինգ տարուան մէջ:

«ԱԶԴԱԿ».- Հայագիտականի հիմնումը ի՞նչ արձագանգ ունեցաւ:

Ե. Փ.- Կանոնաւոր դասաւանդութիւններու սկիզբը (1979ին) Հայագիտական Հիմնարկ եկան մեծածախ երիտասարդներ (չուրջ 75 հոգի), սակայն տարեշրջանի ընթացքին անոնց թիւը նուազեցաւ: Ազատ ունկնդիրի ձեւով, առանց որեւէ ուսանողական պարտաւորութիւններու տակ մտնելու, ուսումնասիրութիւններ կատարելու, կարելի չէ հոն ուսում շարունակել: Հայագիտական Հիմնարկը սովորական տեղ չէ, այլ՝ ուսման կեդրոն մը, ուր ամբողջութեամբ կը գործադրուի համապատասխան ծրագիր:

«ԱԶԴԱԿ».- Հայագիտականի ուսանողներուն կը տրամադրուին ոչ միայն ձրի ուսում, այլ նաեւ՝ գիշերօթիկ կեցութեան եւ այլ դիւրութիւններ: Ի՞նչպէս կ'ապահովուին անոնք:

Ե. Փ.- Այս բոլորը կ'իրականանան հիմնականին մէջ Համագայինի կեդրոնական վարչութեան նիւթական յատկացումներով: Մնացեալը Հայագիտական Հիմնարկը կ'ապահովէ իր բարերարներուն եւ բարեկամներուն (ՀՕՄ, ԼՕՆ, Կիւլպէնկեան) օժանդակութեամբ. բայց օրէ օր կը դժուարանայ պիւտճէի ապահովումը: Այստեղ գնահատանքով կ'արտայայտուի մեր դասախօսական կազմին մասին, որ ի գին մեծ զոհողութիւններու, կը շարունակէ անձնակազմութեամբ գործել:

«ԱԶԴԱԿ».- Հայագիտականի ուսանողներուն

մեծ մասը կու գայ Լիբանանէն եւ Միջին Արեւելքի երկիրներէն: Այլ երկիրներէ ուսանողներու ներկայութիւնը ինչօ՞ւ նուազ է:

Ե. Փ.- Չենք կրնար ակնկալել, որ Հայագիտական Հիմնարկի ուսանողներ գան հեռավոր երկիրներէ, ուր մեր ծրագիրին նախապատրաստութիւնը դպրոցներու մէջ չկայ: Մենք Եւրոպայի երկիրներէն եւ նոյնիսկ Միացեալ Նահանգներէն պարագայաբար կ'ունենանք թեկնածուներ, որոնց համար կը մշակուի յատուկ ծրագիր: Այս ուսանողները կու գան մէկ-երկու տարուան ընթացքին տեսական եւ գործնական բաժիններով հայերէնը զարգացնելու, հայոց պատմութիւն եւ հայ գրականութիւն սորվելու եւ, վերադառնալով, իրենց գաղութներուն ծառայելու համար:

«ԱԶԴԱԿ».- Երեւանի Պետական Համալսարանի հետ Հայագիտական Հիմնարկին գործակցութիւնը ի՞նչ ձեւով կը ներկայացընէք:

Ե. Փ.- Մեր յարաբերութիւնները սերտօրէն կը շարունակուին եւ գործակցութեան պայմանագրութիւնը կը մնայ ի գորու: Մշտական կապի մէջ ենք համալսարանի շրջանակներուն հետ: Դասախօսներ հրաւիրելու առընթեր տեղի ունեցած են համատեղ գործակցութեան այլ մարզեր, ինչպէս՝ Համագայինի ձեւաբանի գրական արխիւներու ուսումնասիրութիւնը, որ իրականացաւ միատեղ աշխատանքով: Համատեղ եղան նաեւ այլ գործեր եւ հրատարակութիւններ, մասնակցութեամբ Պետական Համալսարանի դասախօսներուն: